ցած ժամանակի ընթացքում ծխից եւ փոշուց։ Ափսիդի կենտրոնում տիրամայրն է, Յիսուս գրկին, մեդալիոնի մէջ, երկու կողմից մի մի հրեշտակ, գլուխները խոնարհած, որպէս երկիւղածութեան նշան (պատկ. 159). իսկ առաստաղի վերայ կայ մի ուրիշ խմբանկար. կանգնած է միրուքաւոր մի մարդ, նորա ձախից կանացի մի ֆիգուր, աջից դարձեալ մի տղամարդ, հանդերձը կարճ՝ մինչ ծնկները, նեղ անդրավարտիկով եւ կօշիկներով. երկու տղամարդն էլ, թւում է, լաթից գոտի ունին, որի ծայրերը կախուած են կողքերից։ Նկատելի են եւ ուրիշ ֆիգուր-

Պատկեր 153.

ների միացորդներ։ Իշխանական հագուստներով այս խմբանկարը, կարծում ենք Պռոշն է իւր կնոջ եւ աւագ որդու հետ(*)։ Մի երկրորդ խմբանկար Յիսուսն է նստած, մօտը երեք աշակերտ, որոնցից ոչ մէկը նիմբուս չունի(?)։

Ամենայն հաւանականութեամբ այս նորոգութեան շրջանին է պատկանում Աստուածածնի քարայրի մօտ՝ հարաւից մի փոքրիկ շէնքի կամար, (տես Ալիշան, Այր. 345), որի վերայ արձանագրուած է վանքում սնուած Վարդաբուտի նուիրաբերութիւնը՝ Արթգայ(*) մի հողի՝ քառասուն, և վեց սաու այգու գինը՝ քսան դահեկան (Յաւել. Ա. 115)։

Շինարարութիւնն այս ժամանակ կատարւում է ոչ միայն Աստուածածնի քարայրի շուրջը, այլ եւ վանքի պարսպի մէջ, ժամատնից եւ տաճարից հիւսիս ընկած ժայռի մէջ փորւում են խցիկներ եւ մատուռներ. դոցանից արեւելեանն աւելի հին է, ոմն Կարապետի կողմից տուած, հաւանօրէն տաճարի եւ ժամատան շինութեան ժամանակից (Յաւել. Ա. 105), իսկ արեւմտեան զոյգ խցիկներից մէկի հիւսիսային պատին Մխիթար սարկաւագի եղբօրորդիների՝ Գրիգորիսի եւ Վրթանիսի շինել տուած ՉԹ (= 1260) թուականից (Յաւել. Ա. 116)։ Տաս տարի յետոյ ունինք երկու կողերը սրբաքանդակ՝ եռագլծների հիւսուածքով մի խաչքար, որ զետեղուած է պարսպի արեւմտեան դարբասի գլխին. «Ի Թ. | ՉԺԹ | Խաչատուր» (գրուած է «Խաչատու») արձանագրութեամբ (պատկ. 160)։

Պռոշի անուան հետ կապուած թուականով առաջին յիշատակարանը Այրի վանքի պատմութեան մէջ Գեղարդի պահարանի արձանագրութիւնն է 1268 թուականից(**)։ Գեղարդը արեւելեան Հայոց ամենամեծ սրբութիւններից մէկն է եղել Նոյեան տապանի կտորի եւ Հաւուց Թառի փրկչական պատկերի հետ, որ յիշատակուած ենք տեսնում Վարդանի աշխարհագրութեան մէջ. «. . . եւ Այրիվանքն, ուր կան սբ. գեղարդն Տծայմուխ, ներկեալ արեամբ կենարրին եւ տախտակն սբ. տապանակին Նոյեան Նահապետին. եւ նայ է տուն հաւատոյ Հայաստանեայցս հաստատեալ ի սբ. Լուսաւորչէն . . .»(***)։ Աշխարհացոյցը իւր ծագմամբ ուշ չէ, քան ԺԳ. դարի երկրորդ կէսը, բացառութեամբ փոքրիկ ներմուծութիւնների, որ յետոյ են մտած. հեղինակի հայեացքը Այրի վանքի նշանակութեան մասին, մեր կողմից ընդգծուած բառերով, ցոյց է տալիս վանքի վայելած հռչակն ու հեղինակութիւնը նորա ժամանակ։ Եւ յիրաւի ԺԳ. դարը, մանաւանդ երկրորդ կէսը, այս վանքի պատմութեան ամենափառաւոր շրջանն է ամեն տեսակէտով։

Վանքի հռչակը բարձրացնելու գործում Պռոշ իշխանի շինարարութեան եւ փառաւոր միաբանութեան հետ, որ գրական-գեղարուեստական-հոգեւոր կեանքի կեդրոն էր դարձրել այդ վայրը, տալով այնպիսի հեղինակ անդամներ, ինչպէս Յովհաննէս Գառնեցին է և ապա Մխիթար Այրիվանեցին, կարեւոր դեր են կատարել և վերոյիշեալ երկու սրբութիւնները. մինչ այդ Այրից վանք էր կոչւում, այնուհետև սկսում է

(*) Խաղբակեանք, Ա. 103, պատկ. 31։

(*) Մի գիւղ այժմ էլ նոյն անունով, վանքից հիւսիսարեւմուտք, ոչ հեռու։ Նոյն գիւղի անունը յիշուած և Ջաքարիա Նորգողի արձանագրութեան մէջ ՉԶ (= 1257) թուականին։

(**) Խաղբակեանք, Ա. 98, (Յաւել. Ա. 15, պատկ. 28)։

(***) Ձեռ. Էջմ. № 358 Նժ. (Լիմի)։